

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ  
ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

|. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում են Վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման հարցերով հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) նիստերի վարման և որոշումների ընդունման կարգն ու պայմանները, այսինքն՝ աշխատակարգը:

||. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Հանձնաժողովի նպատակը Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզում վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման գործընթացի ապահովման համար բնագավառին վերաբերող հարցերի քննարկումն է, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման գործընթացում բոլոր շահագրգիռ ոլորտների համագործակցության, ներգրավվածության և արձագանքի համակարգումը, գերակա խնդիրների վեր հանումը, գործընթացի հսկողությունը և համակարգումը:

3. Հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) առանձին վարակիչ հիվանդությունների համաճարակային իրավիճակի լարվածության, բռնկումների ժամանակ համակարգում է արձագանքման միջոցառումները՝ շահագրգիռ կողմերի գործողությունների համակարգման միջոցով:

2) օժանդակում է Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզում գործող պետական կառավարման մարմինների կողմից վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման աշխատանքներին:

3) անհրաժեշտության դեպքում, հիմք ընդունելով Առողջապահության նախարարության համապատասխան կառույցների առաջարկությունը, հաստատում է կարանտին սահմանելու պահանջը:

4) կազմակերպում է վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման գերակա հարցերին վերաբերող խորհրդաժողովներ, հանդիպումներ, քննարկումներ.

5) կազմակերպում է վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման միջոցա- տումների վերանայման և լրամշակման աշխատանքները.

6) անհրաժեշտության դեպքում քննարկում է վարակիչ հիվանդություններին առնչվող կառույցների կողմից, իրենց ոլորտներին վերաբերող հարցերի շուրջ առաջարկությունները՝ Ազգային համակարգող մարմնի քննարկմանը համապատասխան առաջարկություն ներկայացնելու նպատակով;

### |||. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստի միջոցով: Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են եռամսյակը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության:

5. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Հերթական նիստն սկսվում է օրակարգի հաստատմամբ: Հանձնաժողովի անդամների նվազագույն թիվը կարող է լինել 5, առավելագույնը՝ 15:

6. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովի անդամի պահանջի դեպքում նրա առարկությունը կամ վերապահումն արձանագրվում է: Հանձնաժողովի նիստերի արդյունքում կազմված արձանագրություններն ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի կողմից:

7. Հանձնաժողովի նիստերում, բացի հանձնաժողովի անդամներից, իրավունք ունեն ներկա գտնվելու հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրված անձիք խորհրդակցական ձայնի իրավունքով:

### |V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստի մասնակիցների ձայների կեսից ավելի ձայներով:

10. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկությունների ժամանակ ունի մեկ ձայնի իրավունք:

11. Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

### V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

#### 12. Հանձնաժողովի նախագահը՝

- 1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստը:
- 2) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը.
- 3) հանձնաժողովին է ներկայացնում հանձնաժողովի նիստերի օրակարգերի նախագծերը

- 4) համակարգում է հանձնաժողովի աշխատանքը:
- 5) հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը:

Վ|. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

**13. Հանձնաժողովի անդամները՝**

- 1) իրավունք ունեն՝
  - ա. հարցեր ներկայացնելու հանձնաժողովի քննարկմանը
  - բ. առաջարկություններ ներկայացնելու հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ
  - գ. ծանոթանալու հանձնաժողովի նիստերի արձանագրություններին և, անհրաժշտության դեպքում, կատարելու դիտողություններ և առաջարկություններ:
- 2) մասնակցում են հանձնաժողովի աշխատանքներին.
- 3) իրենց իրավասության շրջանակներում կատարում են հանձնաժողովի որոշումները և նախագահի հանձնարարականները՝ ճառագայթային, քիմիական կենսաբանական վտանգների և դրանց դիմակայման հարցերի վերաբերյալ:
- 4) Հանձնաժողովի նիստին հանձնաժողովի անդամի բացակայության դեպքում վերջինս ծանոթանում է նիստի արձանագրությանը:

Վ||. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

- 1) ապահովում է հանձնաժողովի նիստերի կազմակերպումը
- 2) ապահովում է հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումը.
- 3) ապահովում է հանձնաժողովի նիստերի արձանագրության կազմումը, շրջանառում է այն և համակարգում է հանձնաժողովի անդամների դիտողությունների և առաջարկությունների քննարկման և արձանագրությունների լրամշակման գործընթացը.
- 4) ապահովում է հանձնաժողովի գործունեության մասին տեղեկատվության տարածումը
- 5) հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

Վ|||. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

15. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի որոշմամբ: